

Դուրգնեց Մեզակ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հապավում (արեւելատուրա) կոչվում է բառակազմության այն տե-
սակը, երբ բարդ բառի բաղադրիչները (բոլորը կամ մի մասը) ոչ թե բառ-
կամ արմատ են, այլ արմատից մեխանիկորեն վերցրած որևէ պայմանա-
կան մաս, որ երբևէ այլ գործածություն չունեն ու չեն ունեցել. այսպես
ժողովու, կոմերիտ, փող բառերը կազմված են ժողովրդավան (ժող), լուսա-
վորություն (լուս), կոմունիստական (կոմ), երիտասարդություն (երիտ), փո-
խադարձ (փ), օգնություն (օ), դրամարկդ (դ), բառերից, որոնց մեջ ժող,
լուս, կոմ, երիտ, փ, օ, դ բաղադրիչները գիտվում են ոչ թե իբրև համա-
պատասխան բաղադրիչ բառերի արմատներ, այլ իբրև նրանց պայմանա-
կան, կրճատ փոխարինիչներ. ինչպես ընկեր բառի փոխարեն հաճախ դրում
ենք ընկ, ֆադաֆի տեղ՝ ֆ. (օրինակ՝ ք. Երևան), քվի տեղ՝ ք., պրոֆեսորի
տեղ՝ պրոֆ. և այլն՝ ծարբերությունն այստեղ այն է, որ մինչդեռ վերջին
դեպքում դրություն մեջ գործածում ենք կրճատման նշանը (միջակետը),
իսկ արտասանության դեպքում՝ բառը վերարտադրում ենք լրիվ կերպով
(1947 թ. արտասանում ենք 1947 թվին, պրոֆ. Օրբելյան արտասանում ենք
պրոֆեսոր Օրբելյան և այլն), հապավումների մեջ կրճատման նշանը չի
դրվում և բաղադրիչ մասերը արտասանվում են հենց կրճատ ձևով (ժող-
լուս, փող և այլն արտասանվում են հենց ժողլուս և փող ձևով), Պարզ է,
որ եթե դրենք ժող. լուս. կամ փ. օ. դ., պետք է կարդանք ժողովրդական
լուսավորություն. փոխադարձ օգնության դրամարկդ և ոչ թե ժողլուս,
փող, թեև, ըստ երևույթին, այս էլ չի բացառվում։¹

Հապավումները, որոնց սղմները կարող ենք գտնել շատ հին ժամա-
նակներում, բառակազմության մյուս բոլոր ձևերից ծագումնաբանորեն տար-
բերվում են նրանով, որ մինչդեռ անխկական ու իսկական բարդույուն-
ները բանավոր լեզվի ստեղծագործություն են. որ տարածվել են նաև գրա-
վոր լեզվի մեջ ու ծավալվել, հապավումները, ընդհակառակն, գրավոր լեզ-
վի ստեղծագործություն են, ծագում են հենց կրճատ գրությունից և հե-
տագայում են մտել բանավոր լեզվի մեջ ու ծավալվել։

Հնադուին դարերում, երբ մագաղաթը, ինչպես և թուղթը թանկ էին,
և մարդիկ աշխատում էին քիչ տարածության վրա շատ բառեր գրել, հար-

¹ Մի օր Երևանի հեղրավաճառներից մեկը ինձ առաջարկեց գնել «դրոֆմորի մի
գիրք»։ Նա հասկացաւ. թե ինչ հեղինակ է ազնարհում եւ, բայց երբ գիրքը ցույց տվեց,
տեսաւ, որ դա Նիկողայոս Մարի Եկոյանցի վրաց, աբխազաց գործն էր. որի հակառիկ տեղ-
ված էր՝ «դրոֆ. Մարի»։ Պարզ է, որ կրճատված բառը կրճատ էլ արտասանելով։ եւ հազ-
մել էր «դրոֆմոր» անհեթեթ հաղավումը։

կադրված կերպով մզվում էին դեպի խնայողություն և կրճատ գրում ամենատարածված բառերը, ըստ որում բառերը կրճատում էին դանազան եղանակներով. օրինակ՝ ած = աստված, եպսկպս = եպիսկոպոս, չնթ՝ = չխոսու նազովրեցի թագավոր հրեից, քսի. = քահանա և այլն, Այդպես է առաջ եկել, ի միջի այլոց, այժմ համարյա ամբողջ աշխարհում տարածված No (համար) նշանը, որը լատիներեն համար (նոմեր) բառի առաջին տառն է (ն), որ նախապես գրվել է NO (նո) կրճատ ձևով, նորագույն ժամանակներում կապիտալիստական կյանքի արագ թափը, արգեն ոչ թե մագաղաթի կամ թղթի, այլ ժամանակի խնայման թելագրություն, համեմատաբար ավելի լայն չափերի հասցրեց բառերի կրճատ գրությունը, որը սկսեց վերածվել նաև կրճատ արտասանության, այսինքն՝ հիմք դրեց հապավումներին. հապավում էին արդյունաբերական ու առևտրական ֆիրմաների, պաշտոնական զանազան հիմնարկների և նույնիսկ տերությունների անունները. օրինակ՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգները» գրվում էին և գրվում են ԱՄՆ (անգլիերեն՝ U. S. A. — USA), որ դարձել է անկախ բառ և հոլովվում է,¹ Առաջին համաշխարհային պատերազմը և ուղեղիաները ավելի ևս արագացրին կյանքի թափը, և հատկապես մեզ մոտ՝ Սովետական Միության մեջ, որի հետևանքով նորագույն հապավումները չտեսնված չափերի հասան թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքի մեջ, Հայտնի է, օրինակ, որ առաջին համաշխարհային պատերազմի 6 նրան հաջորդող տարիներին հապավումների տենդը այնքան ուժեղ էր, որ նույնիսկ դպրոցներում աշակերտները հապավում էին առարկաների անունները և իրենց դասատուների անունազգանունները, իսկ Ռուսաստանում՝ անուն-հայրանուն-ազգանունները (հայպատա — հայոց պատմություն, «Սվաշխ» — եվրոպայի աշխարհագրություն, «Պոդհով» Պոդոս Հովվյան, «Никпетож» — Николай Петрович Ожеско և այլն), բայց հետո, բարեբախտաբար, այդ տենդը նստեց,²

Սակայն նորագույն հապավումները, այսպես թե այնպես, ամենամեծ տարածում ունեցան Սովետական Միության մեջ, թեև, հասկանալի պատճառով, միանգամայն նոր բովանդակությամբ, Սովետական, պարտիական, արհեստակցական բազմաթիվ մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների անվանումները, որոնք մեր կյանքի ղեկավարական էության պատճառով հաճախ բազմաբառ էին (ինչպես՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտե, Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիա, Լենինյան Կոմունիստական Երիտասարդության Միություն, Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ և այլն) և կյանքի մեջ շատ հաճախ էին կրկնվում, բնականաբար, միտում ունեին ղեպի կարճ ձևերը և վերածվում էին հապավումների, Այդ ձևով ստացվեցին Կենտգործկոմ, Համկ(բ)Պ, ԼԿԵՄ, Լուսժողկոմատ, Ժողկոմխորհ և այլ հապավումներ, Հասկանալի է, որ այդ ձևով հապավումները աստիճանաբար բնագրկեցին նաև ստորագրա մարմինների ու հիմնարկների անունները և մի

¹ Հիշենք մեր զբաղմունքի պատմությունից Գամա-Քաթիպա կեղծանունը, որ սեղծված է Ռաֆայել Պապանյանի ու Նբա ընկերների անուն-ազգանվան սկզբնաառների միացումից և մի անսակ հապավում է։

² Վերջերս մեր զգրոցական աշակերտների մեջ տարածվել է առարկաների կրճատ անվանման նոր և առավել ազնիվ եղանակ՝ «թվաբա», «աշխարհ», «ֆիզ», «հայկ» և այլն, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ դասառախատվում գրված կրճատ գրում լայն բանավոր չափերով։

ժամանակ հապավումների նորաձևությունը այնպես տարածվեց, որ մեր երկրի ղեկավար ընկերներից շատերը (ընկեր Կալինինը, ընկեր Կապանովիչը և ուրիշները) հարկ համարեցին դատապարտել այդ նորամուծությունը¹։ Եվ իրոք, դանդաղան ԻՍ, ԱԻՍ, ՃՏՍ, ԳԼՍ, ՊԱՊ, ՄԱՄ և այլ հարյուրավոր հապավումները, որոնք մանավանդ բառարան էլ չէին ընկնում, անհասկանալի էին դառնում մեր ժողովրդի լայնագույն դանդաղածների համար՝ վերածվելով ինչ-որ պայմանական անվանումների կամ հիերոգլիֆների։ Ստալինյան նոր Կոնստիտուցիայից և ժողովրդատնտեսը միևնույն ժամանակ վերանվանվելուց հետո հապավումների հորձանքը վերստին սահմանափակվեց և այժմ նախկին բազմաթիվ հապավումների տեղ գործածվում են լրիվ արտահայտություններ՝ Միևնույն ժամանակ Սովետ, Լուսավորության Միևնույն ժամանակ, Արտաքին Գործերի Միևնույն ժամանակ, Գերագույն Սովետ և այլն։ Այսպեսով՝ հապավումների տեխնիկան, թեև ոչ խրախուսելի, բայց և այնպես զգալի տարածում ունեցող երևույթ է և հանդիսանում է բառակազմության զարգացման պատմության նորագույն արտահայտությունը։

Հապավումը հենված է տեխնիցիզմի ու մեխանիցիզմի պատվանդանի վրա։ Եվ իրոք, նախորդ փուլերի արտահայտությունները (խսկական և անխսկական բարդություններն ու ածանցումը) պահպանում են առանձին բաղադրիչների իմաստ արտահայտող ձևերը (արմատ և ածանց) և գիտակցորեն կարող են վերլուծվել ու համադրվել նաև տվյալ բաղադրությունների անձանկի մարդկանց կողմից, մինչդեռ հապավումները մեխանիկական կցկցումն են բաղադրիչներից մեխանիկորեն իսկ պոկված մասերի և անմատչելի ու հանելուկային են նրանց համար, որոնք չգիտեն յուրաքանչյուր տվյալ հապավումի կազմությունը։ Հապավումների զգալի մասը, այս իսկ պատճառով, գործածվում է իբրև պայմանական (երկրորդ) անվանում, իբրև մի ինքնուրույն ամբողջական (արմատական) բառ և մտովին չի վերլուծվում, օրինակ՝ Չասո. Գե. Բուհ և այլն։ Այնուամենայնիվ հետաքրքրական է, որ ժողովուրդը ընկալել է հապավումների տեխնիկայի էությունը և երբեմն, կատակի ձևով, կալմում է նաև բանավոր հապավում, որ ինքնին հակասում է հապավման էությանը, քանի որ, ինչպես ասել ենք, հապավումը ծագում է գրավոր կրճատումից։ Այսպես, կյանքի այլանդակ մնացուկ հանդիսացող այն երևույթը, որ որոշ մարդիկ գործ են տեսնում խնամիությունն ու ծանոթությունը հաշվի առնելով, ժողովուրդը ծաղրում է «խծր» բանավոր հապավումով, որ ծագել է խնամի-ծանոթ-բարեկամ բառերի սկզբնատառերից։ Դարձեմ սա բանավոր հապավման միակ օրինակն է մեր մեջ։

Հապավումները, որ, ինչպես վերը ասել ենք, բարդության նորագույն եղանակ են և առանձնապես մեծ տարածում գտան ժամանակակից հայոց լեզվի մեջ սովետական շրջանում, արդեն իսկ դրսևորել են բառակազմական ուրույն օրինաչափություններ, որոնցով և՛ նմանվում, և՛ տարբերվում են սովորական բարդություններից։

Հիմնական տարբերությունն այն է, որ հապավումները կազմվում են ոչ թե ամբողջական բառերից կամ նույնիսկ արմատներից, միայն բառերից

¹ Դեռևս ընկեր Լենինը մի առիթով ասել էր, որ ինքը պղծում է, օր Գուլ է ասել ժողովուրդը (Совпарком) հապավումը։

կամ արմատներից մեխանիկորեն կարված բեկորներից: Լկդ բեկորները, որ մեծագույն մասամբ հանդիսանում են բառի առաջին վանկը կամ առաջին առուր (հնչյունը), դառնում են մի տեսակ փոխարինող կամ ներկայացուցիչ՝ ամբողջ մայր բառի համար: Լկդպիսի բեկորները կոչվում են քեմաներ և նրանցից շատերը արդեն ունեն իրենց կայուն իմաստը: Լկադրանցից ամենատարածվածները՝ յուրաքանչյուրը մի քանի օրինակով.

— ապ — ապահովագրություն (պետապ, սոցապ).

արհ — արհեստակցական (արհմիություն, արհկոմ. տես պրոհ).

աշ — աշակերտական (աշկոռպ, աշխորհուրդ).

աշխ — աշխատանքի, — աշին (աշխժողկոմատ, ¹ աշխողերձներ, աշխու).

— աշխ — աշխատողների (լուսաշխ, գիտաշխ).²

առ — առետուր, առետրական (պետառ, կուլտառ, առկառավարչություն).

առ — առողջապահություն (առժողկոմատ, առբաժին).

արտ — արտաքին (արտգործժողկոմատ, արտառետուր).

բուն — բանվորական (բանկոռպ, բանթղթակից).

բաժ — բաժնի (բաժվար, կազմբաժվար).

բժ — բժշկական (բժֆակ, բժինստիտուտ).

բուժ — բուժական, բուժականների (բուժպրոֆիլակտիկ, բուժտեխնիկում).

գիտ — գիտական (գիտաշխատող, գիտհրատ).

գյուղ — գյուղատնտեսական (գյուղինստիտուտ, գյուղրաժին).

գյուղ — գյուղի, գյուղական (գյուղսովետ, գյուղկոռպ).

գործ — գործադիր (գործկոմ, քաղգործկոմ).

գործ — գործարանային (գործուս, ֆարգործկոմ).

գործ — գործերի (հենրքգործժողկոմ, արտգործժողկոմ).

երիտ — երիտասարդական (երիտղրող, կոմերիտական).

Եր — Երեսանի (Երքաղկոմ, Երկոչ).

գին — գինվորական (գինկոմ, գինթղթակից. տես ուզմ).

էլ — էլեկտրական, — ության (էլտրեստ, էլցանց).

ժող — ժողովրդական (ժողկրթություն, ժողլուս).

լեն — Լենինականի (լենտեքստիլ, Լենքազգործկոմ).

լեն — Լենինյան (լենկոմերիտմիություն, Լենուղի).

լուս — Լուսավորություն, — թյան (ժողլուս, Լուսհիմնարկ).

խմբ — խմբադրական (խմբկոլ, խմբանշնաժողով).

խմայ — խնայողական (խնայդրամարկ).

խորհ — խորհուրդ, — աշին (ղիտխորհ, տնտխորհ, խորհտնտեսություն).

կազմ — կազմակերպչական (կազմբաժին, կազմկոմիտե).

կին — կանանց (կինբաժին).

կենտ — կենտրոնական (կենտկոմ, կենտվարչություն).

կոմ — կոմունիստական (կոմպարտիա, կոմդասախարակություն).

— կոմ — կոմիսար, կոմիտե (ժողկոմ, գինկոմ, կենտկոմ, շրջկոմ).

— կոչ — կոչիկ (Երկոչ).

¹ Գործառնությանից հանված բառերը գնում եմ յակերանների մեջ:

² Այս գեղջում գերջից ենթադրվում է մի ուրիշ բառ եւ՝ սեկցիա կամ միություն, ուստի յուսուցիչ-լուսավորության աշխատողների միություն, գիտաշխ = գիտական աշխատողների սեկցիա և այլն:

կրթ—կրթութեան (ժողկրթութիւն, կրթութեամբ)։

*կուս—կուսակցութեան, -ութեան, -ական (եկոմկուս, «Համկոմկուս», «Կոմկոմիտե», «Կուսանդամ»։ տես լատիներէն)։

կուլտ—կուլտուրական, -այի (կուլտութիւն, կուլտապրանք)։

կամ—համաժողովեանական (Համկոմպարտիա, Համկեմ)։

Հայ—Հայաստանի, -յան (Հայճանտրանս, Հայկոոպ)։

հեռ—հեռապրական (հեռցանց, փոստհեռագրութեան)։

հռո—հողագործութեան (հողգործկոմստ, հողքութիւն)։

-հրատ—հրատարակչութեան (Պետհրատ, Լուսհրատ)։

համ—հանապարհային (հանչիւն, հանտրանսպորտ)։

մանկ—մանկական (մանկգրականութեան, մանկհրատ)։

մանկ—մանկավարժական (մանկիւնստիտուտ, մանկֆակ)։

*մատ—մատակարարում, -ման (բանմատ, մատքութիւն)։

Սերք—ներքին (ներքառ, «ներքգործողկոմստ»)։

*շեն, շին—շինարարութեան, -ութեան (հիդրոշեն, հայշին, շինութիւն)։

շրջ—շրջանային (շրջկոմ, շրջգործկոմ)։

-սլատ—պատմութեան (պարտպատ, Կուսպատ)։

սլատ—պատասխանատու (պատքարտուղար, պատխարար)։

սլատ—պարտական, -իայի (պարտկոմ, պարտանդամ)։

սլատ—պետական (պետքատրոն, պետհամալսարան)։

սլոփ—պրոֆեսիոնալ, -միութեան (պրոֆշարժում, պրոֆանդամ. տես օրի)։

ազմ—ազմական (ազմխորհուրդ, ազմուս. տես զին)։

ռայ—ռայոնական (ռայսովետ, ռայժողկրթութիւն)։

սոց—սոցիալական (սոցապահովագրութեան, սոցապ)։

սոց—սոցիալիստական (սոցմրցութեան, սոցշինարարութեան)։

սպառ—սպառողական (սպառկոոպ)։

-վար—վարիչ (րաժվար, ժողկրթութեամբ, ուսմասվար)։

անխ—տեխնիկական (տեխմատ, տեխմիւնիստ)։

տեղ—տեղական (տեղկոմ, տեղարդ)։

տնտ—տնտեսական (տնտհաշվարկ, «ժողտնտխորհ»)։

-ուս—ուսուցում (պարտուս, ազմուս, գործուս)։

ուս—ուսանողական (ուսկոոպ, ուսգործընկեր)։

բազ—քաղաքական (քաղքուրո, քաղքութիւն)։

բազ—քաղաքի, -ային (քաղսովետ, քաղկոմ)։

-ֆակ—ֆակուլտետ (բժֆակ, մանկֆակ, բանֆակ)։

ֆին—ֆինանսական (ֆինքութիւն, ֆինվարկային)։

Ինչպես պարզվում է բերված օրինակներից, հապավման թեմաները մեծագույն մասով, նախադաս են, այսինքն ընկնում են ոչ թե բառակերպով, այլ բառակերպով կամ բառակերպով և հանդես են գալիս իրեն լրացում հաջորդ թեմայի կամ բառի համար, ինչպես, օրինակ՝ արհիվմ—արհեստական կոմիտե, ժողկրթութեան—ժողգործական կրթութեան, պարտաշխատող—պարտական աշխատող։

Թեմաների մի շնչին մասն է միայն, որ, ընդհանրապէս, վերջապէս է, այսինքն ընկնում է բառակերպով և հանդես գալիս իրեն լրացում, օրինակ՝ շրջկոմ—շրջանային կոմիտե, խմբակ—խմբագրական կոլեգիա, պարտ-

աւս պարտական ուսուցում: Վերջապա թեմաների թիֆն է 9 և նրանց առջև, վերի ցուցակում, նշանակել եմ զծիկ: Առաջադաս թեմաների թիֆն է 55 և ցանկում նրանց վրա ոչ մի նշան չի դրված:

Սակայն բացի այս երկու կարգի թեմաներից, նույն ցուցակում կան և առջևից աստղանիշ ունեցող թեմաներ, որոնք ունեն միաթամանակ և՛ առաջադաս, և՛ վերջապա գործածութիւն: Չրանց թիֆն է 6: Այսպիսով ուրեմն ավելանում է ես 6 առաջադաս և 6 վերջապա թեմա:

Բացի այս տարբերութիւններից, ինչպես նկատելի է, թեմաների ճնշող մեծամասնութիւնը միավանկ է (70-ից 66-ը) և միայն չնչին մասն է երկավանկ, ընդամենը 4 հատ՝ սպեռ, խնայ, հրատ և երիտ և սրանցից էլ միայն Պվերջինն է լրիվ երկավանկ, իսկ մյուսները ունեն մեկական լրիվ վանկ և մեկական թույլ ը-ով կազմվող վանկ՝ դադանավանկ: Վանկերի քանակը ոչ մի չափով չի պայմանավորված նրանով, թե ինչպիսի բառի է փոխարինում տվյալ թեման:

Ինչպես միավանկ, այնպես էլ երկավանկ թեմաները կարող են իմաստային ներկայացուցիչ լինել թե՛ պարզ բառի, թե՛ ածանցավոր կամ նույն-իսկ բարդ և բարդ ածանցավոր բառի: Այսպես, կոշ փոխարինում է կոշիկ արմատական բառին, բան, զին փոխարինում են բանվորական, զինվորական ածանցավոր բառերին, տու և պատ՝ առևտուր և պտտասխանատու բարդ բառերին, ապ և գյուղ՝ ապանովագրութբուն և գյուղատնտեսական բարդ ածանցավոր բառերին և այլն:

Պետք է նկատել, որ հապավման թեմաները ամբողջական բառից կարված են բառերի կրճատ գրութիւն այն կանոնի համաձայն, ըստ որի կրճատ գրվող բառամասը սովորաբար վերջանում է բաղաձայնով, ինչպես Միւ. (Միքայել), պրոֆ. (պրոֆեսոր), դպր. (դպրոցական), ընկ. (ընկեր, -ութիւն), գիտ. (գիտական) և ոչ թե Մի., պրո., ընկե. և այլն: Նույն բանը ունենք և անձնանունների կրճատ գրութիւն մեջ. այսպես, Դեորդ, Գուրգեն, Գարեգին անունների փոխարեն գրում ենք միայն Դ., որովհետև այդ Գ-ին հաջորդում է ձայնավոր, մինչդեռ Գրիգոր անվան տեղ գրում ենք Գր., Սուրեն, Սարգիս անունների տեղ գրում ենք Ս., որովհետև այդ Ս-ին հաջորդում է ձայնավոր, մինչդեռ Սաեփան, Սրապիոն անունների տեղ գրում ենք Սա. և Սր., իսկ Սմբատի տեղ՝ Սմբ.: Հայոց լեզվի բառակրճատման հենց այս կանոնով էլ առնվում են հապավման թեմաները, որով վերստին ընդգծվում է այդ երևույթի առաջ դալը գրավոր լեզվից: Մեր դիտած 70 թեման էլ ավարտվում են բաղաձայնով, նրանցից 64-ին ուղղակի հաջորդում է ձայնավոր և միայն 6-ին է հաջորդում բաղաձայն, այդ էլ այն պատճառով, որ տվյալ լրիվ բառի մեջ երկու կամ ավելի բաղաձայնի կուտակում կա. այսպես, տոխ-նիկական (խ և ն), պտտ-մութիւն (տ և մ), կենտ-բոնական (ա և բ), բան-վորական (ն և վ), զին-վորական (ն և վ) և քծ-շկական (ժ և շ): Սրանցից առաջին հինգը լիովին համապատասխանում են մեր վանկատման և տողադարձի կանոններին. մինչդեռ վերջինը շեղվում է դրանցից, և այդ կատարվում է այն բնական պատճառով, որ եթե բժշկական բառից իբրև թեմա վերցնեինք բժշ մասը, կստացվեր երկու զադանականիով երկավանկ թեմա (բբշ), որպիսին առհասարակ չկա: Այս տեսակետից հետաքրքրական է նաև մասկ-ավարժական, տնտ-եսական և կրթ-ութիւն թեմաների օրինակը, որոնք նույնպես չեղվում են մեր վան-

կատման ու տողադարձի կանոններին և երկուական բաղաձայններն իրենց մեջ առնելով՝ հաջորդ վանկը զրկում վանկասկզբի բաղաձայնից: Այս դեպքում անշուշտ զործում է բառերի կրճատ դրութեան այն կանոնը, որի մասին խոսեցինք վերը և որով ղեկավարվում ենք հապավման թեմաները առանձնացնելու ժամանակ: Այսպես, կրճատ գրելու ժամանակ պիտի գրենք մանկ. խորհուրդ, կրթ. մարմին, տնտ. խորհրդակցութիւն և այլն, ուստի և իրրե թեմա առնված են ոչ թե ման, կր. տն, այլ՝ մանկ, կրթ, տնտ ղանկերը:

Հապավման համար իբրե թեմա ընտրված բառարկութեանը շատ հաճախ համընկնում են բառասկզբի արմատներին. ինչպես, օրինակ՝ զործ (զործարանային), գյուղ (գյուղաանտեսական, գյուղի, գյուղական), շրջ (շրջանային), ներք (ներքին), լուս (լուսավորութիւն), պետ (պետական), ռազմ (ռազմական), սպառ (սպառողական), վար (վարիչ) և այլն, որով հապավումը հաճախ արտաքնապես նմանվում է կցական կամ անհոդակապ բարդութիւններին. այսպես՝ գյուղսովետ, Հայէներգո, լուսբաժին, մանկդրադարան և այլն շատ նման են գյուղական, հայավանդ, լուստու, մանկատյաց իսկական բարդութիւններին, իսկ. ասենք, կրթբաժին, ռազմկոմիտար, բուժտեխնիկում և այլն միմիայն ա հոդակապ ստանալով, կնմանվեն իսկական բարդութիւններին (կրթբաժին, ռազմկոմիտար, բուժտեխնիկում և այլն): Սակայն շնայած նույնիսկ այդ ձեական նմանութիւններին, հապավումները այնուամենայնիվ բարդութիւն չեն և այդ նախ և առաջ իրենց իմաստաբանական առանձնահատկութեամբ, ուստի և ռազմկոմիտար ու ռազմակոմիտար (եթե այսպիսի բառ կազմենք), կրթբաժին ու կրթարաժին, բուժտեխնիկում ու բուժատեխնիկում և այլն իմաստաբանորեն նույնը չեն լինի, որովհետեւ մինչդեռ ռազմ, կրթ և բուժ թեմաները ունեն իրենց հաստատուն ու անփոփոխելի ֆերականակաց ու բառային կոնկրետ իմաստը, ռազմ, կրթ և բուժ արմատները, իրրե լոկ արմատներ, ունեն միայն ընդհանուր. ֆերականորեն չտարբերակված իմաստ: Այսպես, օրինակ՝ բուժ թեման նշանակում է բուժակային (բուժակներ, ֆելդշերական), մինչդեռ բուժ արմատը կարող է նշանակել և՛ բուժիչ, և՛ բուժական, և՛ բուժման, և՛ բժշկական և այլ շատ իմաստներ, ուստի և բուժտեխնիկում նշանակում է բուժակային (ֆելդշերական) տեխնիկում. մինչդեռ բուժատեխնիկում բառի մեջ բուժ արմատը կարող է նշանակել բուժիչ, բուժական, բժշկական, բուժարար և այլն: Նույն ձևով, ասենք, լուսհիմնարկ բառի մեջ լուս թեման նշանակում է միայն լուսավորութիւն. այնինչ լուսահիմնարկ բառի մեջ լուս արմատը (բուժը) կարող է նշանակել լուսավոր, լույսի, լուսատու, լույսային, լուսավորող և այլն. և այլն: Այստեղից բխում է, որ ինչքան էլ հապավման թեմաները համընկնեն բառական արմատներին, իսկ հապավումները՝ անհոդակապ բարդութիւններին, այնուամենայնիվ նրանց միջև կա որակական մեծ տարբերութիւն, որովհետև հապավման թեմաները ունեն ոչ թե արմատի, այլ ինքնամփոփ, ավարտված բառի իմաստ, քերականական (ձևաբանական ու խոսքի մասային) կայուն իմաստ, մինչդեռ արմատները այդպիսի իմաստից զուրկ են:

Հետաքրքրական է, որ հապավումներից մի քանիսի մեջ նկատվում է անհրաժեշտ թեմայի կամ բառի լիակատար բացակայութիւն, թեև նրա իմաստը հասկացվում է ամբողջութեան մեջ. այս երևույթը ես պայմանա-

կան կերպով կանվանեի կրկնաձևավորում կամ զեղչումով հապավում: Այս հասկանալու համար վերցնենք մի երկու հապավում և բացենք. այսպես, կենտրոնական կոմիտե, տեխնիկական տեխնիկական միջնորդություն — բանվորական մատակարարում, ֆարգործուս = ֆարքրիկագործարանային շուկայական և այլն, այսինքն հապավման մեջ առկա են ժողովրդական թեմաներ, որքան լրիվ բառի իմաստ է ընդգրկում ամբողջ հապավումը: Այսպես չեն. սակայն, բոլոր հապավումները. նրանց մեջ երբեմն նկատվում է որևէ թեմայի կամ բառի զեղչում, ուստի և նրանց բացման ժամանակ զգացվում է մի բառի պակաս: Այսպես, պրոֆշարժում, պրոֆանդամ և պարտանդամ հապավումները, որ արտաքինապես իրար հար ու նման են, բայց էություն ունեն այն տարբերությունը, որ մինչդեռ պրոֆշարժում նշանակում է պրոֆեսիոնալ շարժում, պարտանդամ՝ պարտիայի անդամ, պրոֆանդամ նշանակում է ոչ թե պրոֆեսիոնալ անդամ, այլ պրոֆեսիոնալ միություն անդամ. հետևաբար, պրոֆանդամ հապավման մեջ զեղչված է միությունը բառը կամ սրա թեման: Այսպես են նաև Գեղաշխ, Լուսաշխ, Գիտկոոպ, Գինբաժին և մի շարք այլ կրկնահապավումներ կամ զեղչումով հապավումներ. Գեղաշխ, Լուսաշխ նշանակում են գեղարվեստի աշխատողներ, Գիտկոոպ, Գինբաժին և մի շարք այլ կրկնահապավումներ կամ զեղչումով հապավումներ. Գեղաշխ, Լուսաշխ նշանակում են գեղարվեստի աշխատողներ, Գիտկոոպ, Գինբաժին նշանակում է գիտական աշխատողների կոոպերատիվ, իսկ կինբաժին՝ կանանց մեջ տարվող աշխատանքի բաժին: Այս բոլոր ընդգծված բառերը զեղչված են վերոհիշյալ հապավումների մեջ, ուստի և վերջիններս բացելու ժամանակ պետք է ավելացվեն, այսպես գիտական աշխատողների կոոպերատիվը կհասկացվի գիտական կոոպերատիվ, կանանց մեջ տարվող աշխատանքի բաժինը՝ կանանց բաժին և այլն, որ բոլորովին հիշատակվում է:

Զեղչումով հապավման մի յուրահատուկ տեսակ պետք է համարել այն, երբ հապավման մեջ զեղչված է ոչ թե ամբողջ բառ, կամ թեմա, այլ որևէ բառի վերջին կամ միջին մասը, Ահա դրանց օրինակները. Կոլտնտեսություն. գինկոմաս: Սրանցից առաջինը՝ կոլտնտեսական, թվում է, թե կազմված է կոլ (կոլեկտիվ) թեմայից և տնտեսական բառից, բայց իրականում այդպես չէ. դա կազմված է կոլտնտեսություն հապավումից, որին ավելացել է ական ածանցը և դրա շնորհիվ դուրս է մնացել ությունը ածանցը, այսպես պետք է լինեի կոլտնտեսությունական կամ կոլտնտեսութենական, ինչպես ունենք համամիութենական ածանցավոր բառը: Պարզ է, որ այդ ությունը ածանցը դուրս է գցված բառի կարճացման նպատակով, որի հետևանքով ստացվել է կոլտնտեսական զեղչումով հապավումը:

Մեր վերցրած երկրորդ օրինակն էր գինկոմատ բառը, որը կազմված է գինվորական բառի գին թեմայից և կոմիսարիատ բառի կոմ սկզբնականից ու ատվերջնականից, որոնց միջև զեղչված է իսարի բառամասը: Այս իհարկե արված է այն նպատակով, որ տարբերվեն գինվորական կոմիսար

¹ Ավելորդ չի լինի հիշեցնել, որ հույն կոլ թեմայից հույն այս իմաստով, բայց ավելի մեծ զեղչումով մի հապավում է կազմել գրող Սա. Զորյանը. հա գործածում է կոլվոր բառը կոլտնտեսականի, կոլտնտեսության իմաստով, որ հիշեցնում է հեծվոր, կալվոր, քանվոր բառերը. այստեղ հորոթյունն այն է. որ կոլ թեման առնվել է իբրև արժան և նրան ավելացվել ածանց: Այսպիսի հապավում չկա:

(գինկոմ) և գինվորական կոմիտարիատ (գինկոմատ) բառերի հապավումները¹

Այլ մանրամասնությունների մեջ այլևս չմտնելով, այժմ տեսնենք, թե ինչ տեսակների են բաժանվում հապավումները՝ ըստ իրենց կազմության։ Մինչև այժմ մենք խոսում էինք վանկային թեմաներով կազմված հապավումների մասին, որոնք սովորաբար կոչվում են վանկային հապավումներ, որովհետև, ինչպես և տեսանք, այս տեսակի մեջ, որպես կանոն, բառակերպի վանկերն են հանդես գալիս իբրև թեմա։ Սա հապավման ամենատարածված և ամենամատչելի տեսակն է։

Հապավման երկրորդ տեսակը, որ կոչվում է տառային, կազմվում է բառերի սկզբնատառով և շատ ավելի քիչ տարածում ունի ու շատ ավելի քիչ է հասկանալի։ Տառային հապավումները մի տեսակ պայմանական բառ են, որոնց ամբողջական իմաստը շատ ավելի է մատչելի ու հասկանալի, քան նրանց վերլուծական իմաստը, մասերի (տառային թեմաների) բովանդակությունը։ Այսպես, շատ տարածված ՀՕՊ, Իուհ հապավումները բոլորի կողմից ճանաչված են իբրև համապատասխան կազմակերպությունների անուններ, բայց քչերը դիտեն, որ առաջինը նշանակում է Հակաօդային Պաշտպանություն, երկրորդը՝ Բուհ՝ Բարձրագույն Ուսումնական Հաստատություն։

Այսպիսի տառային հապավումներ են՝ ԳԱՍ (գիտական աշխատողների սեկցիա), ՍՍՌՄ (Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն), ՀԱՄԿԽ (Համաժողովենական Արհեստակցական Միությունների կենտրոնական Խորհուրդ), ԼԿԵՄ (Լենինյան Կոմունիստական Երիտասարդության Միություն) և այլն։

Հապավումների երրորդ տեսակի մեջ մտնում են այն բառերը, որոնց կազմի մեջ միաժամանակ կան և՛ վանկային կամ տառային թեմաներ, և՛ լրիվ բառեր, սրանք լինում են՝ վանկա-բառային, վանկա-տառային և տառա-բառային, ըստ որում թեմաների տարբեր հաջորդականությամբ։ Ահա մի քանի օրինակ։

ա) վանկա-բառային՝ ժողգատարան (ժողովրդական դասարան), կոլտնտշուկա (կոլեկտիվ տնտեսական՝ կոլտնտեսական շուկա), Քանաքեռ-շին (Քանաքեռի շրջաբարություն)։

բ) վանկա-տառային՝ ՀամԿ(բ)Պ (Համաժողովենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիա), Պաշը (Պաշտպանությանը Աջակցող Ընկերություն)։

գ) տառա-բառային՝ ՍՍՌՄիություն (Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն), Հայկական ՍՍՌ (Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա) և այլն։

Իհարկե անառարկելի է, որ հապավումների այս անխնդան պես, ինչպես արդեն նշել ենք, արդյունք է ունեցիտայի ու մեր նոր սոցիալիստական արագաթափ հանրակեցության և մասնավորապես իր վրա կրում է ողեսաց լեզվի մեծ ազդեցությունը։ Հապավման թեմաների մի զգալի մասը փոխանցված է ուղղակի ողեսերենից, պատրաստի վիճակում

¹ Այս երևույթը նույնպես գալիս է կրճատ գրության անխնդանից, հիշենք ընկ-բյուժ, բժկ-բյուժ, կուզմ-յաղան և այլ գրությունները ընկերություն, ընկերության, կազմակերպական լրիվ մեծերի փոխարեն։

(Կուլ, կոմ, սոց, պրոֆ և այլն), սակայն ոչ այդ ուղղակի փոխառած թեմաները և ոչ էլ հապավման տեխնիկան ամբողջությամբ առած չեն ֆուսել մեր լեզվի մեջ իրրե մեխանիկական կցորդ կամ անհարիր երևույթ, այլ մերվել են նրան, օրգանապես մարսվել նրա մեջ և զտել իրենց աղգային կերպարանքն ու ձեր։ Այսպես, վանկային հապավումը ավելի լայն տարածում է գտել մեր լեզվի մեջ, քան տառայինը, թեև ուսերենում դրանք հավասարապես տարածված են։ Հայերենում հատկացուցիչ թեմաներ ավելի շատ կան, քան ուսերենում։ Հայերենում հատկացուցիչ և որոշիչ թեմաները նախադաս են, մինչդեռ ուսերենում՝ որոշիչ թեմաները նախադաս են, իսկ հատկացուցիչ թեմաները վերջադաս և այլն, և այլն։ Այս և մյուս բոլոր տարբերությունների մասին խոսելը շատ հեռուն կանխի, ուստի զբաղվենք միայն մի քանի համեմատությամբ։ Սկսենք տառային հապավումից. այս տեսակը ոչ միայն ավելի մեծ տարածում ունի ուսերենի մեջ, քան հայերենի, այլև՝ ուսերենում միանգամայն այլ ձևով է արտասանվում, քան հայերենում, եթե տառային հապավման մեջ ձայնավոր չկա։ այսպես СССР և ՍՍՌ արտասանվում են ուսերենում՝ էսէսէս, իսկ հայերենում՝ սըսըըը. ЛКСМ ուսերենում արտասանվում է էլկաէսէմ, իսկ էկՅԵՄ հայերենում արտասանվում է լլկլըմ։ Այս բխում է նրանից, որ մինչդեռ մենք բաղաձայնը արտասանում ենք ը ձայնավորի օգնությամբ, ուսերենը զիմում են բաղաձայնի այբբենական անվանը. այսպես, նրանք ունեն ЦК, РК, РКС և այլն, որ հեշտությամբ արտասանում են ցեկա, էոկա, էոկակա՝ բառային բնույթ տալով նրանց, այնինչ մենք կկ, Ռկ և այլն պիտի արտասանենք կրկը, որկը, որոնք բառային կերպարանք չունեն, ուստի և նախընտրում ենք դրանց վանկային հապավումները՝ Կենտկոմ, Ռայկոմ, Թերես այս երևույթն է պատճառներից մեկը, որ Ձեկա, Նեպ, Ջազս, Գէս ուսերեն տառային հապավումները, փոխանակ թարգմանվելու, ուղղակի փոխառյալ ձևով են գործածվում հայերենում՝ անվերլուծելի և ինքնուրույն բառերի արժեք ստացած։¹ Հետաքրքրական է, սակայն, որ թեև ուսերենում հապավման մեջ Յ (է) ունեցող Նեպ բառը գրում ենք ե-ով, Գէս-ի մեջ, դրան հակառակ, գրում ենք լ, որ երևի արդյունք է «էլեկտրական» բառի ներկայությունից՝ զիտակցությանը այս հապավման մեջ, որը հայերենի թարգմանվելու դեպքում էլ պիտի պահպաներ է տառը (պետք է լիներ շէկ՝ Հիդրո-էլեկտրական կայան)։

Ուսերենից փոխառյալ հապավումների հարցը վերջացնելու համար հիշենք նաև կոլխուզ, կոլխոզնիկ, սովխուզ, գլավխու, լիտխուց և մուսխոն² վանկային հապավումները, որ բավական հաստատուն կերպով մտել են մեր լեզվի մեջ այն տարբերությամբ միայն, որ թեև առաջին երկուսը ունեն իրենց տարածված ու գործածական հայերեն համարժեք ձևերն էլ (կուլտնտեսություն, կոլտնտեսական), մյուսները զուրկ են դրանցից։ Անշուշտ կան սակավ տարածում ունեցող մի շարք այլ փոխառյալ հապավումներ ևս,

¹ Այս հապավումները ուսերենում կազմված են հետևյալ բառերից. 'Презвычайная Комиссия (ЧК), Новая Экономическая Политика (НЭП), Запись Актов Гражданского Состояния (ЗАГС), Гидро-Электрическая Станция (ГЭС).

² Այս հապավումները ուսերենում կազմված են հետևյալ բառերից. КОЛлективное ХОЗяйство (Колхоз), Колхоз+ник անան, СОВетское ХОЗяйство (Совхоз), ГЛАВное (Управление) ЛИТературы (Главлит), ЛИТературный Фонд (Литфонд), МУЗыкальный Фонд (Музфонд).

ժանապանհ տառային (ԻՍ, ԱԻՍ, ԶԻՍ և այլն), որոնք պրոֆեսիոնալ կամ մասնագիտական շրջանակներից դուրս չեն գալիս կամ զործածվում են իրրա հատուկ անուն:

Հետաքրքրական է թեմաների հաջորդականության շարքի հարցը հայերեն և ռուսերեն հապավումների մեջ: Քանի որ հատկացուցիչը ռուսերենում ետադաս է, իսկ հայերենում՝ նախադաս, բնականաբար հատկացուցիչ թեման էլ ռուսերենում և հայերենում պետք է համապատասխան զիբբն ունենա: Եվ իբոք, ռուսերեն «Наркомторг» հապավման դիմաց, որտեղ торг (торговля) հատկացուցիչ թեման վերջադաս է, հայերենի «Առժողկոմ» հապավման մեջ առ (առևտրի) հատկացուցիչ թեման առաջադաս է: Սակայն, նախ քան առաջ անցնելը, հարկ եմ համարում նշել, որ մինչգետ հայերենը, հատկացուցիչ նախադաս լինելու շնորհիվ, թույլ էր տալիս «ծողկոմի» և «ծողկոմատի» անվանումները հապավումներով տարբերել, ռուսերենը, հատկացուցիչ ետադաս լինելու պատճառով, այդ հնարավորությունը չուներ: այսպես, մենք ունենինք «լուսժողկոմ» և «լուսժողկոմատ», «առժողկոմ» և «Առժողկոմատ» և այլն, իսկ ռուսերենում «Наркомпрос», «Наркомторг» միաժամանակ նշանակում էին և՛ կոմիսար, և՛ կոմիսարիատ, բայց հենց որ հատկացուցիչը բացակայում էր կամ նրա փոխարեն մի որոշիչ դրվում, ռուսերենն էլ ձեռք էր բերում նույն հատկությունը, օրինակ՝ «Нарком» և «Наркомат», Военком և Военкомат և այլն: Հատկացուցիչ նույն այս նախադաս դրությունը պետք է վերագրել ե այն, որ հայերենում ինքնուրույն կերպով կաղմված են հատկացուցիչ-հատկացյալի թեմաներով մի շարք հապավումներ, որոնք ռուսերենում չկան, օրինակ պարտանդամ, պրոֆանդամ և այլն:

Այժմ քննենք մի քանի հապավումների թեմաների հաջորդականության կարգը հայերենում և ռուսերենում:

СССР (Союз Советских Социалистических Республик)

ՍՍՌՄ (Սովետական՝ Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն):

Այս օրինակի մեջ ռուսերեն հապավման առաջին թեման, իբրե հատկացյալ, հայերենում ընկել է վերջը:

Комсомол (Коммунистический Союз Молодежи)

Կոմերիտիություն (Կոմունիստական Երիտասարդության Միություն):

Այս օրինակի մեջ ռուսերեն հապավման վերջին թեման, իբրե հատկացուցիչ, հայերենում ընկել է իր հատկացյալից առաջ:

Այս և վերի օրինակները ցույց են տալիս, որ հապավման տեխնիկան հայերենում ստացել է իրոք ազգային ձև ու կերպարանք ե մեխանիկական փոխադրություն չէ դրսից:

Ինչոր տեսակի հապավումները ենթարկվում են հայերենի բառաթեման (հոլովման) և բարդացման ու ածանցման կանոններին: Վանկային ու տառային հապավումներն ընկնում են ի հոլովման տակ: այդպես են և խառն հապավումները, բացի նրանցից, որոնց վերջին բաղադրիչը մի ուրիշ հոլովման ենթարկվող ամբողջական բառ է: Այսպես, օրինակ, Բուհ-բուհի-բուհից, պարտկոմ-պարտկոմի-պարտկոմից, կոլտնտչուկա-կոլտնտչուկայի և այլն, բայց՝ պարտկադմակերպություն-պարտկադմակերպության, կոմերիտիություն-կոմերիտիության և այլն:

Հայերենի բառակազմության սովորական կանոններն են դրսևորվում Տեղեկագիր 8, - 8

նաև այն ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում բարդ կամ անհասկանալի բան կադմել հապավումներին, այսպես, բժշակ-բժշակցի, խմբի-խմբիկական, տեղի-տեղիական, բուհ-բուհավարտ և այլն. նույնիսկ ուսերենից փոխառյալ հապավումներն ունեն բառակազմական լայն ճյուղավորում, օրինակ՝ կոլխոզ-կոլխոզային-կոլխոզապատկան, զագս-զագսավորվել¹ և այլն:

Այժմ մնում է մի երկու խոսք ասել՝ հապավումների տեխնիկայի հնչյունաբանական հատկանիշների ժառանգությունը, Որպես կանոն, հապավումները չգիտեն հայերենի հնչյունափոխության և սղման կանոնները. ընտրված թեման (առաջագաս, թե վերջադաս, միևնույն է) միշտ զործածվում է իր կայուն հնչյունակազմով. ոչ վերջադաս լինելու դեպքում է վերականգնում արմատի կորցրած կամ հնչյունափոխված ձայնավորը, ոչ էլ առաջագաս լինելու դեպքում սղում կամ հնչյունափոխում յուր արմատական ձայնավորը:

Այսպես, եթե լուս թեման (լուսավորություն բառից, լույս արմատից) լուսաբաժին, լուսօրգաններ և այլ հապավումների մեջ, իբրև շեշտագուրկ արմատական բուն, զործածվում է ուլ բրկհնչյունի փոխարեն ու ձայնավորով, զա բնական է և օրինաչափ. սակայն նույն լուս թեման բառավերջում ևս մնում է միևնույն հնչյունակազմով (օր. ժողլուս, քաղլուս, և այլն): մինչդեռ այս դեպքում, իբրև շեշտակիր արմատ, նա պետք է հանգես դար իր լրիվ ձևով և պահպանելով ուլ բրկհնչյունը, ինչպես, ասենք, արշալույս, կիսալույս, զեղալույս և այլ բարդ բառերի մեջ: Այստեղից հետևում է, որ լուս թեման թե առաջին, թե երկրորդ դեպքում ոչ թե արմատ է կամ բուն, այլ պարզապես լուսավորություն բառի մեկ բեկորը, իբրև ամբողջ այդ բառի ներկայացուցիչ կամ սիմբոլ, և ենթակա չէ հնչյունափոխության:

Վերցնենք ուրիշ օրինակ. կիմ թեման, որ իր հնչյունական ձևով միանգամայն համընկնում է կին արմատին ու կին բառին, զործածվելով իբրև առաջագաս թեմա, չնայած շեշտակորույս լինելուն, այնուամենայնիվ չի հնչյունափոխվում և յուր չհնչյունափոխված ձևով է մնում կիմբաժին հապավման մեջ, մինչդեռ պետք էր սպասել կնքածին²:

Հետաքրքրական է և շեն և շին թեմաների օրինակը: Սրանցից առաջինը արդեն մոռացության է մատնվել երկրորդով. այսպես, մինչդեռ առաջ ունենք եիդրոշեն (гидрошестр) հապավումը, այժմ զործածվում են Ալուսինշին, Քանախաշին, Քաջարանշին, Սեվանշին և այլ բաղմաթիվ հապավումներ ոչ թե շեն թեմայով, այլ շին: Շենը շինարարություն բառի շին արմատի լրիվ ու չհնչյունափոխված ձևն էր, որ հիդրոշեն հապավման մեջ

¹ Այս վերջին բառը ժողովրդական սանդղագրություն է և, որքան ինչ հայտնի է, գրական մկրտություն չի ստացել. պաշտոնապես ասվում է զագսում վաճաճվել, և ոչ թե զագսավորվել:

² Այսպես են մեր կնքներ, կնքալույս, կնքամարդ, կնքաքաղ, կնքախաղաղություն և այլ բաղմաթիվներ: Չիշտ է, մենք ունենք նաև կնքալույս բաղմաթիվներ, որի մեջ կնքալույս կնք արմատը չի հնչյունափոխված, բայց սա կնք մարդ կնքական բաղմաթիվ աղավաղված ձևն է՝ անաղաղալույս և հապավում է ստացած. ինչպես եթե ասենք կինալույս, կինահանգիշ և այլն, փոխանակ կին անգիշ, կին իրանանգիշ հաղմաթիվների, որոնք կազմված են ուսերենի աղղեցություն, հաղմաղղուն, չաղմաղի բառերի փոխարեն: Այսպիսի հաղմաթիվների մեջ կին բառը բնականաբար չպիտի հնչյունափոխվեր:

կարող էր դիտվել իբրև արմատ, եթե շրջապատը անմահ զեպոստը հնչյունափոխվեր և տար, ասենք, հիդրոշինցի, հիդրոշինային, հիդրոշինապետ։ Բայց չեն թեման շեշտակորույս լինելու զեպոստը այսպիսի հնչյունափոխություն չէր կրում և մնում էր միշտ շեն ձևով (հիդրոշինցի, հիդրոշինային և այլն), շատ և շատ նման լինելով մի շարք իսկական բարդությունների վերջնարմատ շենին, ինչպես՝ Նորաշեն, Մաղկաշեն, Զիզրաշեն և այլն։ Այս տեսակետից թերևս կարելի էլինե՞ր երկրորդն ըստը դիտել իբրև իսկական բարդության (նորաշեն) և իսկական հապավման (Սեվանշին) միջև տատանվող մի բառ, եթե շեն արմատը հիդրոշինի մեջ նշանակեր ավան, շեն, բնակավայր (ինչպես Նորաշենի մեջ), և ոչ թե շինարարություն, ձեռնարկություն (ինչպես Սեվանշինի մեջ)։

Ինչ վերաբերում է շին թեմային, ապա պետք է նկատել, որ սա էլ լուր, կին և մյուս բոլոր թեմաների նման հնչյունափոխված ձևով է մնում թե վերջապես և թե առաջադաս գործածվելու զեպոստը) շինբառին, շինագրասեղան, Սեվանշին, Ալումինշին, Գանաքեռշին և այլն։

Այսպիսով, հապավման թեմաների հնչյունաբանական ուսումնասիրությունը հաստատում է, որ թեմաները անփոփոխ ու կայուն բեկոր են պարզ, բարդ կամ բարդ-ածանցավոր ամբողջական բառերի, հանդիսանում են նրանց ներկայացուցիչը՝ կամ սիմբոլը և թեմայի ու արմատի բացարձակ նմանություն զեպոստ էլ նրանք նույնական չեն։